

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՌՈՒՄԻՆԻԱՅՈՒՄ

(Քաղված պրոֆ. Վ. Բրնըցեանուի զեկույցեն)

Ռումեն Ժողովրդական Ռեսպուբլիկայի Ակադեմիայի կից՝ Սլավ և Արևելյան լեզուներու ինստիտուտի շրջանակին մեջ, շորս տարիներ Վեր գոյություն ունի գրաքարի դասընթացք մը, զոր աննկուն կորովով կղեկավարե հայկաբան պրոֆ. Վլադ Բրնըցեանու։ Ուսանողներու մեծ մասը եղած են հայեր, իսկ մնացյալը ռումեններ։ Դասընթացքի ծրագիրը բաղկացած է գրաբարի քերականության, հայոց պատմության և հայ հին ու միջին դարու գրականության վերաբերյալ նյութերէ։ Չորրորդ տարվա ընթացքին դասավանդված է նաև հնագիտություն և կատարված է հին ձեռագրերու ընթերցանություն։

Պրոֆ. Բրնըցեանուի հսկողությամբ, ուսանողները ևս կարդացել են դասախոսություններ. հիշենք մեկ քանին.

Նեկտար Պողոսյան դասախոսած է «Հայ գրականությունը 10—12-րդ դարում»։ Դավիթ Ղերիկյան—«Բագրատունյաց փայլուն դարաշրջանը»։ Դանիել Տեր-Մարկոսյան—«Փավստոս Բյուզանդացիի դարաշրջանն ու գործը»։ Անահիտ Փոլատյան—«Կիր Նախատանի պատմության մեջ»։ Դավիթ Ղըժրիկյան—«Մեսրոպյան աշուրբենն առաջ դրություն ունեցող գրի մը խնդիրը»։ Ընթացիկ տարեշրջանի համար նախատեսված են հետևյալ նյութերը. «Այբուբենի ստեղծումն ու առաջին թարգմանությունները», «Հայ լեզվի կազմությունը», «Զարդանկարչական արվեստը հայկական ձեռագիրներում մեջ», «Հայ արդի գրականությունը», «Կիրիկյան Հայաստանի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքը», «Խ. Աբովյանի գործը», «Մ. Նալբանդյանի գործը», «Ավ. Իսահակյանի գործը», «Ռ. Պատկանյանի գործը», «Հայոց մշակութային դերը Ռումանիո մեջ 19-րդ դարում», «Իոանն չել Կոմպլիթ, մականվանյալն «Արմեանուլ», «Հայ ծագումով ռումեն փիլիսոփա Ասաքի» և այլն։

Պրոֆ. Վ. Բրնըցեանու ըրած է երկու հրապարակային դասախոսություն, նյութ ունենալով՝ «Միջնադարյան հայ բանաստեղծությունը» և «Հայ ժողովրդական երգը»։

«Մեր ուսանողները,— կըսե պրոֆ. Բրնըցեանու,— բազմագրեցին կամ ընդօրինակեցին Մովսես Խորենացիի, Ագաթանգեղոսի, Փավստոս Բյուզանդացիի, Նզնիկի և ուրիշներու երկերու այն հատվածները, որոնցմիջոցինք մեկի ավելի օրինակներ։ Ամեն տարի կկրկնենք քերականության դասերը։

1950 տարվա լամար, Պատմության ինստիտուտի կողմն ինձի պարտականությունն տրվեցալ կազմելու գրաբարի քերականություն մը, որ պիտի վիճագրվեր։ Իմ առաջարկով, մեր դասընթացքի շրջանին վրա ավելցվեցավ տարի մը ևս, որու ընթացքին դասավանդվեցավ հնագիտություն և հին գրվածքներու ընթերցանություն։ այս նպատակին իրագործման նպաստելու համար, 1951-ի ամառը պատրաստեցի հնագիտության դասագիրք մը ու հնագրական ալբոմ մը՝ բաղկացած 80 տախտակներով։

Շնորհիվ այս աշխատանքներուն, ուսանողները սկսեցին հաջողապես կարդալ ու ընդօրինակել Ռումեն Ժողովրդական Ռեսպուբլիկայի Ակադեմիայի մատենադարանին մեջ գտնված հայ ձեռագրերը և առաջարկել են Ակադեմիային, որ իր կողմի մասնաձյուղին մոտ գտնված 300 հայկական ձեռագրերը բերել տա Բուքրեշ։ Առաջարկը ընդունված է և գործադրությունը սկսած։

«Մանր հիվանդություն մը ժամանակավորապես ընդհատեց աշխատանքներս,— կըսե պրոֆ. Բրնըցեանու,— բայց հույս ունիմ, որ պիտի կարենամ վերսկսիլ գործունեությունս. պիտի ավարտեմ քերականության գրքի կազմությունը, պիտի ավարտեմ նույնպես հին Հայաստանի ընկերային, մշակութային և քաղաքակրթական կացության մասին պատրաստած աշխատությունս։ Սկսած եմ և պետք է որ ավարտեմ աշխատասիրություն մը նրեանի Ակադեմիայի պարբերաթերթին համար, ինչպես նաև բառարան մը՝ Ամիրսներու անունները հին հայերենի մեջ» բովանդակությամբ։

«Ուսումնասիրության նոր տարեշրջան մը կսկսինք. կփափագիմ շուրջս տեսնել եռանդուն երիտասարդներ, ինչպես 1948—1949 տարեշրջանին»։

(Արտատպված Բուխարեստի «ՆՈՐ ԿՅԱՆՔ» թերթից)